ՀՀ գենդերային քաղաքականության 2011-2015թթ. ռազմավարական ծրագրի շրջանակներում Վայոց ձորի մարզում 2012թ. իրականացված միջոցառումների մասին

№	Միջոցառման անվանումը	Կատարած աշխատանքները	Ֆինանսավորման աղբյուրը
1.	Մարզում գենդերային հարցերով զբաղվող մշտական գործող խմբի /հանձնաժողովի / աշխատանքների կազմակերպում	2012թ. մարզի գենդերային հարցերով մշտական հանձնաժողովը գումարել է 4 նիստ /07,12,2011թ. 24,06,2012թ.19.07,2012թ. 07,12,2012թ./, քննարկվել է 12 հարց, որոնք վերաբերվել են համայնքներում և ուսումնական հաստատություններում, առողջապահական հիմնարկներում գենդերային քաղաքականության լուսաբանմանը և մարզում գեդերային քաղաքականության իրականացմանը, միջոցառումների իրականացմանը:	Ֆինանսավորում չի պահանջվել
2.	Տեղական ինքնակառավարման մարմիններում /այդ թվում՝ համայնքների ղեկավարների աշխատակազմերում կանանց դերակատարման բարձրացում և ամրագրում	Մարզի 14 համայնքներում կայացել է հանձնաժողովի անդամների և ակտիվի հետ հանդիպումներ, կազմակերպվել կլոր սեղաններ, իրականացրել իրազեկման աշխատանքներ: Առաջադրվել է համայնքներում գենդերային հարցերով զբաղվող պատասխանատու անձի նշանակման անհրաժեշտության խնդիրը:	Ֆինանսավորում չի պահանջվել
3.	Պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում գենդերային քաղաքականության վերաբերյալ իրազեկման աշխատանքների կազմակերպում	2012թ. սեպտեմբերի 23-ին կայանալիք համայնքային ընտրություններում կանանց ակտիվության բարձրացման նպատակով մարզում կազմակերպվեց քարոզարշավ: Համայնքի ղեկավարի պաշտոնում առաջադրվեց 2, իսկ ավագանու պաշտոնի համար 26 թեկնածու: Շնորհիվ ձեռնարկած աշխատանքների մարզի 10 համայնքներում ավագանու անդամ ընտրվեց 17 կին :	Ֆինանսավորում չի պահանջվել
4.	Համայնքային մակարդակում գենդերային հարցերով զբաղվող անձի ընտրություն	ՀՀ Վայոց ձորի մարզպետի 26,07,2012թ №011343421/12 գրությամբ մարզի 13 համայնքներում համայնքների ղեկավարների կողմից նշանակվել են գենդերային հարցերով պատասխանատու անձինք: Մարզային հանձնաժողովի կողմից մշակվել է նրանց աշխատանքների հիմնական ուղղությունները, տրվել կոնկրետ հանձնարարություններ 2012թ. ընթացքում կատարվելիք աշխատանքների վերաբերյալ:	Ֆինանսավորում չի պահանջվել

5.	Մարզային թերթերում գենդերային հիմնահարցերի լուսաբանման կազմակերպում	<< Վարդաձոր >> թերթում բացվել է << Գենդեր>> խորագիր, որտեղ լուսաբանվել է հանձնաժողովի աշխատանքները	Ֆինանսավորում չի պահանջվել

Ընտանիքի, կանանց, երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի պետ Վ.Իսախանյան

15.01.2013թ.